

---

## ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՌՈՒՅԱԿՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

### ՆԱԻՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ

Մարդկության հազարամյակների պատմությունը հարուստ է ուշագրավ իրադարձություններով, որոնք հետաքրքրական են ոչ միայն և ոչ այնքան զուտ պատմական առումով, այլև ավելի հաճախ կարևորվում են իրենց սոցիալական, քաղաքական, տնտեսական, հոգևոր ազդեցություններով, հետևանքների մասշտաբով: Հետևաբար, հետազոտողի համար ավելի կարևոր են դառնում ոչ այնքան բուն պատմական անցքերը, որքան այն, թե ինչ է ընկած դրանց հիմքում: Արդյո՞ք այն, ինչ մատնանշվում է իբրև այդպիսին, համընդհանրական նշանակություն ունի և անկախ տեղից ու ժամանակից ներկայացնում ու պայմանավորում է մարդկային հարաբերությունները, դրանց զարգացման հեռանկարները: Կամ՝ ինչպե՞ս է այն ներկայանում, ե՞րբ ու ինչպե՞ս է կարևորվում ծավալվող գործընթացների համատեքստում: Այս հարցադրումները, իհարկե, բավականին վերացական են: Առաջին հայացքից դժվար է որոշել, թե բարձրացված որ հարցադրումները հատկապես կարող են տեղին լինել: Այդ պատճառով թերևս տեղին կլինի դիտարկել մի հիմնախնդիր, որը միանգամայն համահունչ է այդ հարցադրումներին: Խոսքը արդարության գաղափարի ու սոցիալական իրականության քաղաքական կառուցակցման մեջ նրա տեղի ու դերի մասին է: Հիմնախնդրի հատկապես երկրորդ մասը՝ սոցիալական իրականության քաղաքական կառուցակցման մեջ արդարության տեղն ու դերը, ամենաշատն է թեժ քննարկումների տեղիք տալիս: Ավելին, քանի որ հիմնախնդիրը ներառվում է բարոյականության ու քաղաքականության փոխհարաբերությունների համատեքստ, ապա ավելի հաճախ ուղղակի վերջիններիս համատեղելիության հարցից են բխում ու արժևորվում արդարության դերն ու նշանակությունը: Որպեսզի ավելի պարզ լինի, թե խոսքն ինչի մասին է, բավական է հիշատակել, որ արդարությունը, բացի իբրև անձնական առաքինություն դիտարկվելուց, հատկապես իմաստավորվել է իբրև մարդկային (սոցիալական) հարաբերությունների, դրանց հիման վրա ձևավորված սոցիալական հաստատությունների «առաքինություն», որակ<sup>1</sup>: Այդ պատճառով այն բնականորեն արժևորվել ու ներառվել է մի կողմից բարոյականության, մյուս կողմից՝ քաղաքականության մեջ: Այսինքն՝ արդարությունը դիտարկվել է իբրև սոցիալական հարաբերությունների կազմակերպման իդեալ (սկզբունք) ինչպես բարոյականության, այնպես էլ քաղաքականության տեսանկյունից:

Ամենօրյա կյանքի հարահոսում բարոյական արժեքների կարևորումն ու շրջանառումը կարծես ինքնին ենթադրվող երևույթ են: Առկա հարաբերու-

---

<sup>1</sup> Տե՛ս **Аристотель**. “Политика”, “Никомахова Этика”, Сочинения в 4-х томах. Т. 4, М., 1984:

թյունները, գործողությունները, արարքները գուցես այնքան էլ չհամապատասխանեն բարոյական արժեքներին: Բայց դրանց գոյությունը էապես պայմանավորում է մարդկային համակեցությանը բնութագրական մի շարք հատկանիշներ, գործընթացներ և այլն: Դրանց թվում կարևոր տեղ է զբաղեցնում քաղաքականությունը:

Սոցիալական պրակտիկան կարծես անընդմեջ հաստատում է բարոյականության ու քաղաքականության անհամատեղելիությունը կամ ավելի պարզ՝ քաղաքականի անբարոյական լինելու հանգամանքը: Ոմանց համար սա հավելյալ փաստարկ է եզրակացնելու, որ քաղաքականությունը արտաբարոյական իրողություն է, այսինքն՝ թույլատրելի չէ քաղաքականը «չափել բարոյականի արշինով»: Այդպիսով, անգամ գիտական տեսանկյունից անիմաստ է համարվում քննարկման ներկայացնել դրանց փոխհարաբերությունները: Սակայն նրանց անհամատեղելիության ջատագովներն անգամ, կամա թե ակամա, շատ հաճախ ստիպված են շրջանառել բարոյականի որոշակի տարրեր:

Ի՞նչն է հնարավորություն կամ իրավունք տալիս խոսելու քաղաքականի, քաղաքականության բարոյական կամ ոչ բարոյական լինելու մասին: Այս հարցադրումը փիլիսոփայական լուրջ, ինչպես նաև մասնավոր գիտական հիմքեր ունի: Ի՞նչն է իրավունք տալիս պնդելու և սահուն անցում կատարելու մի ոլորտից մյուսը՝ առանց մտավախության անհետևողական լինել սեփական ձեռնարկման մեջ: Թերևս այդպիսի հիմնավորումների փնտրտուքի մեջ ամենապարզն ու դյուրինը բարոյականի ու քաղաքականի անխուսափելի, անքակտելի կապն է սոցիալականի հետ: Այսինքն՝ սոցիալականն այն ձևաչափն է և նույնիսկ առարկայացման կերպը, որում նրանք դրսևորման, փոխազդեցության, փոխպայմանավորման ու փոխակերպման հնարավորություն են ստանում: Սակայն, բարոյականի ու քաղաքականի միջև կապն ու փոխազդեցությունն ակնառու են դառնում, երբ կոնկրետանում են որևէ իրողության մեջ: Այս իմաստով արդարությունը լավագույնս է արտահայտում բարոյականի ու քաղաքականի բարդ փոխհարաբերությունները սոցիալականի ձևաչափում: Այդ պատճառով բոլոր այն մտածողները, ովքեր արդարության գաղափարը համարում են խաբեության միջոց՝ իշխելու ու կամքը թելադրելու, բարոյականության ու քաղաքականության համատեղելիությունը համարում են անհնարին (Ֆ. Նիցշե): Բայց, մինչ այդ խնդրի մանրամասնումը, թերևս տեղին կլինի նախ սկսել հետևյալ հարցադրումներից.

- Ինչո՞ւ և ինչպե՞ս են բարոյական արժեքները և, հատկապես, արդարության գաղափարը հայտնվում սոցիալական իրականության մասին քաղաքական դիսկուրսում,

- Ո՞րն է նրա դերն ու նշանակությունը:

Թեև այս ձևակերպումները խիստ ընդհանրական են, այնուամենայնիվ դրանք հնարավորություն են ընձեռում հասկանալու բարոյականության ու քաղաքականության միջև փոխհարաբերությունների առավել կոնկրետ ձեռնարկումները:

Փիլիսոփայական մտածողության կայացման փուլում արդարության գաղափարը առաջիններից մեկն է, որ սկսում է հետաքրքրություն առա-

ջացնել նտածողների շրջանում: Հենց որ մարդկային համակեցության հիմնախնդիրները սկսում են կարևորվել, այն հայտնվում է բուռն քննարկումների ու բանավեճերի կիզակետում: Բավական է հիշատակել Պլատոնին և Արիստոտելին, որոնց՝ արդարության մասին ուսմունքները առանցքային նշանակություն ունեն ոչ միայն անցյալի, այլ նաև այսօրվա քննարկումների ու տեսությունների համար:

Ընդհանրապես, ինքնին գաղափարը բավականին հրապուրիչ է և հետաքրքրական միանգամից մի քանի առարկայական ոլորտների համար: Քաղաքագիտությունից մինչև սոցիալական հոգեբանություն, սոցիոլոգիայից մինչև սոցիալական ու քաղաքական փիլիսոփայություններ, տնտեսական փիլիսոփայությունից մինչև բարոյագիտություն կարող են արդարությունը հետազոտելու հայտ ներկայացնել: Նույնիսկ ազգագրական ու մշակութաբանական հետազոտությունները կարող են անմասն չմնալ այդպիսի ձեռնարկներից: Մի բան ակնհայտ է, որ անկախ այն բանից, թե որքանով է իրատեսական կամ ոչ իրատեսական արդարության իրականացումը, կարևոր է նախ պարզել, թե ինչու և ինչպես է այն հայտնվում և որտեղից, ինչ է ներկայացնում և ինչպես:

Ընդհանրապես, արժեքների գոյաբանական կարգավիճակի շուրջ բանավեճերն ամենասկզբունքայինն ու անողորմ են փիլիսոփայության մեջ, և, թերևս, առօրյա կյանքում նույնպես: Խոսքը պարզապես նրանց նշանակության, իմաստի կամ մեկնաբանության տարբերությունների մասին չէ: Այսինքն՝ խնդիրն այն չէ, թե բոլոր դժվարությունները ծագում են այն պարզ պատճառով, որ ամեն մեկը յուրովի է հասկանում, օրինակ, ինչ ասել է արդարություն: Այսպիսի բացատրությունը թերևս առաջինն է, երբ ուզում են «արդարացնել» անհամաձայնությունների ու տարածայնությունների առկայությունը թե՛ տեսական, թե՛ պրակտիկ մակարդակներում: Նման դեպքում որոշ տեսաբաններ այսպիսի իրավիճակը համարում են փակուղային և առաջարկում ընդհանրապես դադարեցնել արժեքների տարբեր մեկնությունների շուրջ բանավեճերը<sup>2</sup>: Իսկ հնարավոր է արդյոք կանխել նմանատիպ իրավիճակները, կամ թե որտեղի՞ց և ինչպե՞ս են դրանք սկսվում:

Իրականում այս դեպքում յուրաքանչյուրին սպասվում է շատ ավելի լուրջ և սկզբունքային որոշում: Սրանք հարցադրումներ են, որոնք այսօր չէ, որ ծառացել են, այլ ունեն առնվազն երկուսուկեսհազարամյա պատմություն: Դրանց վաղեմությունը, սակայն, ամենևին չի թեթևացնում դրանց շուրջ որոշում կայացնելու ծանրությունը:

Որտեղի՞ց և ինչպե՞ս են արժեքները հայտնվում և ինչո՞ւ են հանգեցնում մինչև ինքնամոռացության ու անհանդուրժողականության հասնող բանավեճերի: Թե՛ գիտական, թե՛ արտագիտական հարցախույզը բացահայտում է, որ արժեքի ընտրությունն ու ընդունումը, փաստորեն, մեծ մասամբ իռացիոնալ և ոչ թե ռացիոնալ երևույթ է: Թե ինչպես է ստացվում, որ նախապատվությունը տրվում է հատկապես այս արժեքին և ոչ թե մյուսին, ինչո՞ւ է այն դառնում այդքան կարևոր, հաճախ անբացատրելի երևույթ է: Ավելի հաճախ այն ընդունում են իբրև «ի սկզբանե տրված» իրողություն, ո-

<sup>2</sup> См. у Сутор Б. Малая политическая этика. М., 2001:

րին մարդը կամ մարդկային խումբը բնականորեն հետևում է: Ճիշտ է, այս գործընթացի հոգեբանական ու սոցիալական բացատրությունները որոշակի լույս այնուամենայնիվ կարող են սփռել ընտրության առեղծվածի վրա:

Արժեքի ընտրությունն ու կիրարկումն ունեն ընդգծված հուզական երանգավորում, որն արտահայտում և արտացոլում է մարդու էությունը, անցյալի ու ներկայի կենսափորձը, ձեռքբերումներն ու ձախողումները և այլն: «...Իմաստային կազմավորումները գիտակցական (ինտելեկտուալ) և հուզական (աֆֆեկտային) գործընթացների խառնուրդ են, ինչով մեծ մասամբ բացատրվում է նրանց համարժեք գիտակցման դժվարությունը»<sup>3</sup>: Քանի որ արժեքն այդ իմաստային կազմավորումների թվին է պատկանում, ապա նույն արդարության դեպքում դժվար թե հաջողվի մինչև վերջ բացահայտել, թե ինչու և ինչպես է այն «ընտրվում»: Եվ որ պակաս կարևոր չէ, արդյոք հաջողվո՞ւմ է ամբողջովին տեսնել, թե ինչ է այն ամփոփում ու ընդհանրացված ներկայացնում:

Վերադառնալով արժեքների գոյաբանական կարգավիճակի հիմնահարցին՝ պետք է նշել, որ այս առումով միմյանց հետ են բախվում երկու ծայրահեղ դիրքորոշումներ:

- Առաջինը հիմնվում է պլատոնյան փիլիսոփայական ավանդույթների վրա և հայտարարում. **արժեքները գոյություն ունեն ի սկզբանե, մարդուց առաջ ու անկախ: Մարդու գործը դրանք բացահայտելն է: Բացահայտումը ենթադրում է մարդու կատարելագործում: Հակառակ դեպքում մարդը մնում ու սահմանափակվում է իր գոյության ստորին մակարդակով:**

- Երկրորդը, սակայն, նախ հանդես է գալիս առաջինի սուր քննադատությամբ ու որակում այն իբրև մետաֆիզիկական: Ըստ այդ մոտեցման՝ **արժեքները ի սկզբանե տրված չեն, այլ ստեղծվում են մարդու կողմից, հետևաբար դրանք կարող են ձևավորվել ոչ միայն ինքնաբերաբար, ինքնաբերիս, այլև գիտակցական ընտրության հետևանք են:**

Այս երկու տեսակետների լույսի ներքո էլ արդարությունն իբրև արժեք ստացել է իր փիլիսոփայական մեկնաբանությունները: Նախ, ինչպես արդեն նշվեց, արդարությունն այն բարոյական արժեքների թվին է պատկանում, որոնք անմիջականորեն վերաբերում են սոցիալական համակեցությանը, նրան բնորոշ հարաբերություններին ու նրա կազմակերպմանը: Սակայն ավելի բարեխիղճ և հետևողական լինելու համար թերևս տեղին կլինե՞ր դիմել փիլիսոփայության դասականներից մեկին՝ Արիստոտելին: Արիստոտելն արդարությունը քննարկում է երկու տիպի հարաբերությունների՝ մարդու՝ ինքն իր հետ և մեկ ուրիշի հետ հարաբերության տեսանկյունից: Առաջին դեպքում մարդն արդար է ինքն իր հանդեպ, եթե ողջախոհ է, քաջարի, չափավոր<sup>4</sup>: Սա արդարության անձնային չափումն է, որը ցույց է տալիս վերջինիս առնչությունը մարդկային մյուս բոլոր որակների ու առաքինությունների հետ:

Ինքը՝ Արիստոտելը, հասկանում ու կարևորում է արդարության գաղափարը հատկապես իր երկրորդ՝ մարդ-մարդ հարաբերությունների տե-

<sup>3</sup> Братусь. Психология личности // "Психология личности", т. 2. Самара, 2004, с. 410.

<sup>4</sup> Sicut Aristoteles. Большая этика. Сочинения в 4-х томах. Т. 4. М., 1984, էջ 324:

սանկյունից: Գուցե նաև այն պատճառով է այս տեսանկյունը կարևոր, որ բացահայտում է բուն արդարության էությունը: «Քանի որ...արդարությունը արդարացիի մեջ է, այսինքն՝ հավասարի մեջ, այսինքն՝ միջինի մեջ, ընդ որում՝ արդարացիի մասին խոսվում է իբրև արդարացի ինչ-որ բանում, հավասարի մասին՝ իբրև հավասարի ինչ-որ բանի նկատմամբ, միջինի մասին՝ իբրև միջինի ինչ-որ բանի միջև, ապա, հետևաբար, արդարությունն ու արդարացին կարող են այդպիսին լինել ինչ-որ մեկի նկատմամբ ու ինչ-որ բանում»<sup>5</sup>: Այլ կերպ ասած՝ հույն մտածողը փորձում է հիմնավորել, որ արդարության դեպքում.

- միշտ առկա են մարդկանց միջև որոշակի հարաբերություններ,
- այդ հարաբերությունները հաստատվում և գործառվում են որոշակի կապակցությամբ (օրինակ՝ որոշակի բարիքների տիրապետման, փոխադարձ պարտականությունների),
- այդ հարաբերության կողմերը միմյանց նկատմամբ պետք է հավասար լինեն ու ներկայանան վերոնշյալ կապակցությամբ (օրենքի, բարիքների տիրապետման կամ պարտականությունների ստանձման),
- պետք է խուսափեն ծայրահեղություններից,
- պետք է միմյանց միջև կիսեն որոշակի պարտականություններ ու բարիքներ:

Արդարությունը հավասարությամբ մեկնելու արիստոտելյան մոտեցումը հավելվում է նաև համամասնության գաղափարում, ինչը շատ որոշիչ նշանակություն ունի նրա ուսմունքի համար: «Եթե արդարացին հավասարն է, ապա համամասնական հավասարը նույնպես կլինի արդարացի»<sup>6</sup>: Այլ կերպ ասած՝ յուրաքանչյուրին ըստ արժանվույն տալու ու բաշխելու գաղափարով Արիստոտելը ավելի է խորացնում ու հարստացնում արդարության ու արդարացիի գաղափարը: *Արդարությունը ոչ միայն հավասարի մեջ է, այլ նաև արժանի դարձած հավասարության կամ քանակական առումով անհավասարության, ուր համամասնությունը սահմանում է բարիքների ու պարտականությունների բաշխումը*: Այդքանով Արիստոտելը հնարավորություն է ընձեռում արդարության հասկացությամբ անփոփել մարդկայինը, նրան բնորոշ հարաբերությունները, հատկություններն ու գործընթացները:

Վերադառնալով արժեքների գոյաբանական կարգավիճակի վերաբերյալ բարձրացված հարցադրմանը՝ մեկ անգամ ևս անհարժեշտ է ձևակերպել այն արդարության կապակցությամբ: Ըստ առաջին մոտեցման՝

- Արդարությունն արժեք է, որը մարդը չի ստեղծել, այլ ընդամենը հայտնաբերել է իբրև իր նմանների հետ համատեղ կացության կարևորագույն սկզբունք: Արդարությունը համատիեզերական երևույթ է և նույնանում է ներդաշնակության ու յուրաքանչյուրին ըստ իր տեղի ու դերի փոխհատուցելու գաղափարին<sup>7</sup>:

Այս տեսակետին չհամաձայնելու փորձը նպատակ է հետապնդում ցույց տալու, որ արդարությունը նախ պետք է համատիեզերական երևույ-

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 325:

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> Տե՛ս **Платон**. Государство, Сочинения в 3 томах, т. М., 1968, էջ 40:

թից նեղացնել մինչև սոցիալական երևույթի չափերի: Բացի դրանից՝ նրա իրականացումը ոչ այնքան նպատակ է, որքան միջոց շատ ավելի կարևոր նպատակների համար: Այսինքն՝ արդարությունը երկրորդ դեպքում ավելի շատ ինստրումենտալ մեկնաբանություն է ստանում:

- Արդարությունն արժեք է, որը ստեղծվում է արհեստականորեն՝ մարդու կողմից համատեղ կյանքն ավելի հարմարավետ և կանխատեսելի դարձնելու համար<sup>8</sup>:

Պատահական չէ, որ այս տեսակետն առաջին անգամ ակնարկում է Ջոբսը, ապա Չյունը ներկայացնում է դրա ավելի համապարփակ մշակումը:

Իրականում այս երկու տեսակետները չնայած իրենց խիստ տարբեր տեսական-աշխարհայացքային բնույթին, թվում է, թե գործնականորեն լուծում են կամ ճիշտ հակառակը՝ ծախողում մի շարք խնդիրներ, սակայն վերջիններիս մեջ առաջնայինը և կարևորը այն է, թե

- արդյոք հնարավոր է, որ արդարությունը հավասարապես նշանակալի և կարևոր լինի բոլորի համար՝ անկախ ազգային, մշակութային, կրոնական և էթնիկ պատկանելություններից և այլն, հետևաբար ունենա որոշակի առաջնայնություն սոցիալական մնացած արժեքների նկատմամբ,

- արդյոք հնարավոր է արդարության այնպիսի ըմբռնում, որը կկիսեն ու կփորձեն իրականացնել բոլորը՝ դարձյալ անկախ ազգային, մշակութային, կրոնական և էթնիկ պատկանելություններից և այլն:

Այս հարցադրումներն այսօր կիրառական նշանակություն ունեն սկսած սոցիալական-ազգայինից մինչև միջազգային-համաշխարհային մակարդակներ: Առանց այս հարցերին պատասխանելու, դժվար թե հնարավոր լինի համաշխարհային մասշտաբի սոցիալ-տնտեսական կամ քաղաքական որևէ ձեռնարկ:

Այսպիսով, կարելի է համարձակվել ձևակերպելու արդարության վերաբերյալ առաջին ամփոփումը.

*«Արդարությունը համալիր հասկացություն է»:*

Թեև կարելի է առարկել, թե իսկ ո՞ր հասկացությունն այդպիսին չէ, այնուամենայնիվ՝ այս հասկացության ու գաղափարի ծնունդը կապված է նախ և առաջ հին աշխարհի հասարակություններում ծավալվող որոշակի գործընթացների հետ: Այդ հասարակություններում սոցիալական հարաբերություններն ու փոխազդեցությունները աստիճանաբար նոր որակական հատկանիշներ էին ձեռք բերում: Ձևավորվում ու սոցիալական նշանակություն էին ստանում բարիքի ամենատարբեր ձևեր՝ անշարժ ու շարժական, նյութական ու հոգևոր, սոցիալական՝ փառք, հեղինակություն, ընդունվածություն և այլն: Ամտիկ մտածողները «ստիպված էին» հաշվի առնելու արտադրող ու արտադրանք, առաջարկող ու սպառող, կառավարող ու կառավարվող, այսինքն՝ իշխանական ու արտադրական, բարիքների առաջացման սոցիալական ու արտասոցիալական միջոցների, նրանց վերաբերող հարաբերությունների մի ամբողջ համախումբ: Ակնհայտ է, որ սոցիալական հարաբերությունների, նոր սոցիալական կառույցների ու հաստատությունների զարգացումն ու բարդացումը պետք է պահանջեին դրանց իմաստա-

<sup>8</sup> Стен Гоббс Т. Левиафан, Сочинения в 2 томах, т. 2, М., 1991, էջ 97, Юм Д. Трактат о человеческой природе, Сочинения в 2 томах, т. 1, М., 1996, էջ 525:

վորման նոր եղանակ ու հնարավորություններ: Արդարության գաղափարը հենց այդպիսին էր: Այդ իսկ պատճառով, առավելապես նաև այսօր, այն հեշտությամբ քննարկման առարկա է դառնում հավասարապես տնտեսագիտության, քաղաքագիտության, բարոյագիտության ու փիլիսոփայության համար, այսինքն՝ ենթադրում է սոցիալական երևույթների մի ամբողջ համալիր, որտեղ միանգամից խաչվում են մի քանի առարկայական ոլորտներ: Ավելին, հասարակության կառուցվածքային ու ֆունկցիոնալ բարդացմանը զուգահեռ, ավելի է հարստանում ու նոր բովանդակային մեկնաբանություններ ձեռք բերում արդարության գաղափարը: Դրա վկայությունն է 20-րդ դարի երկրորդ կեսին միանգամից մի քանի ուսմունքների ու տեսությունների առաջադրումը: Չնայած քիչ չեն նաև այնպիսիք, որոնք զուր են համարում այն հասկանալու ու կիրառելու բոլոր ջանքերը: Ուստի հաշվի առնելով այն հանգամանքը, որ չափազանց կարևոր է պարզել, թե

- որտեղից, ինչպես և ինչու են առաջացել, փոխվել ու զարգացել մարդկային հարաբերությունները, դրանք կարգավորող մեխանիզմներն ու հաստատությունները և

- ո՞ւր են տանում,

ապա արդարությանը վերաբերող հարցադրումները չեն կարող դադարել հետաքրքիր ու գործնական լինելուց: Ո՞ր խնդիրներն են, ե՞րբ և ինչպե՞ս են առաջնահերթություն ստացել: Ինչո՞ւ են դարձել բուռն քննարկումների առարկա: Ինչպե՞ս է մարդը պատկերացրել իրեն սոցիալական հարաբերությունների համատեքստում և ինչպե՞ս է արժևորել դրանք ու արժևորվել: Ինչպե՞ս են փոխվել բուն պատկերացումները և սպասումները սոցիալական հարաբերություններից ու սոցիալական հաստատություններից: Այս բոլոր հարցադրումների պատասխանները համապարփակ պատկերացում են տալիս արդարության գաղափարի ու նրա նշանակության մասին, և հակառակը՝ արդարության գաղափարը բացահայտում է մարդկային առաջացման ու փոխակերպման ընթացքն ու ուղղությունը:

Որքան էլ զարմանալի լինի, բայց արդարության գաղափարի ծնունդը, «անկախ համատեքստից», հաճախ կապում են նախնական կարգի, ներդաշնակության, սահմանվածի խախտման հետ: Մարդն իր նախնական «անմեղության ու մաքրության» մեջ երբևէ չի կարող մտածել ու հոգալ արդարության մասին: Արդարության մասին «հոգսը» (հայդեգերյան իմաստով) դառնում է մարդկային այն ժամանակ, երբ վրա է հասում մարդկային հարաբերությունների բնականության խեղաթյուրում և բուն մարդկային-քաղաքակրթականի խաթարում: «Խաթարված սահմանվածի» առաջին գիտակցումն իր հետ բերում է մարդկային գիտակցության արթնացում ու սթափեցում (Չոբսի, Յյունի ուսմունքները հասարակության ու հասարակական կարգի մասին դրա վառ ապացույցներն են): Արդյոք այդպիսի արթնացումը բարի՞ք է:

Եթե հետևելու լինենք արևմտյան հասարակագիտական մտքի զարգացմանը վաղ շրջանից մինչև մեր օրերը, ապա ակնհայտ է, որ արդարության մասին պատկերացումները ենթադրում են առավել «հասուն» ու կայացած հասարակություններ ու հասարակական կառույցներ: Չետևաբար, *արդարության ձգտումն առաջանում է իբրև նախնական բնական ներդաշնակության խախտված հետևանք:*

Արդեն երկուսուկես հազար և ավելի տարի է մարդկությունը փորձում է տեսական, բայց առավելապես գործնական մակարդակներում հիմնավորել արդարության գոյության իրավունքը: Այսինքն՝ Չյունն ու Նրա հետևորդներն այնքան էլ սխալ չէին, երբ խոսում էին արդարության արհեստական բնույթի մասին: Չէ՞ որ մարդկային համակեցությունը և այն արդարության հիման վրա կազմակերպելը մարդկային թուլություններն ու թերությունները հաղթահարելու, մեղմելու կամ «փոխհատուցելու» յուրահատուկ ձև են: Սակայն զարմանալիորեն չենք կարող նաև մերժել այն մոտեցումը, որ մարդ էակին տրված է այդ ձևի մեջ անփոփել նախ իր իռացիոնալ, ապա նաև ռացիոնալ ձգտումները մարդկային հարաբերությունների կազմակերպման, նրա շրջանակներում բարիքների բաշխման առումով:

Պատահական չէ, որ քաղաքական ոլորտն ու քաղաքականությունը իր դասական իմաստով չափազանց «չահագրգռված է» այն շրջանառելու: Հղում անելով «արդարությանը»՝ քաղաքական ոլորտն ու քաղաքականությունը, այդպիսով, նախ հայտ են ներկայացնում ցույց տալու իրենց կապը իդեալականի հետ: Արդարությունը, սկսած առնվազն Լուսավորականությունից, հասարակական իդեալ է, որի իրականացումը ցույց է տալիս տվյալ հասարակության բարձր քաղաքակրթական ձեռքբերումները: Քաղաքականությունը միշտ ներկայանում է իբրև անմիջական ու պրակտիկ իրողություն, որի նպատակը առկա հարաբերությունների պահպանումը կամ փոփոխությունն է ազդեցության ու վերահսկողության շնորհիվ: Ազդեցության գոտիների ընդլայնմանն ու պահպանմանն ուղղված այս քայլերը միշտ ենթադրում են այսպես կոչված «էմպիրիկ իրականության» փոփոխություն: Սակայն աժեքային-իդեալականի հետ նրա կապը «արդարացնում է» և մեղմացնում պրագմատիկական կողմնորոշում ունեցող քաղաքականության էությունը: Այն դադարում է լինել լոկ «այստեղի ու հիմայի», առօրյա խնդիրներին ուղղված երևույթ կամ պայքար իշխանության համար: Արդարությունն այն գաղափարներից է, որ իր առասպելական կաղապարով ոչ միայն ձևավորում է, այլ նաև սինվոլիկ ճանապարհով արտացոլում է մարդկային առօրյա կյանքի ձգտումների համակարգը: Հակառակ դեպքում դժվար կլիներ կարգավորել ու կազմակերպել դրանք, նույնիսկ ռացիոնալացնել, դարձնել հրապարակային քաղաքականության առարկա:

Մարդկային մտքի պատմության մեջ քաղաքականի ձևավորման հիմքում ավելի հաճախ դրվել և դրվում են իռացիոնալ, քան թե ռացիոնալ տարրեր (օրինակ՝ իշխելու կամքը): Բացի դրանից, մարդկային պահանջմունքները նույնպես ավելի հաճախ ունեն իռացիոնալ ակունքներ: Ստացվում է, որ այս խիստ պրագմատիկ, նպատակաւազ գործունեության մեջ, ինչպիսին քաղաքականությունն է, իրականում անհրաժեշտություն է դառնում որոշակիորեն կարգավորել, կազմակերպել ու ռացիոնալացնել իռացիոնալը: Ընդ որում՝ բոլոր ջանքերը՝ ռացիոնալացնել ու ենթարկել հաշվարկված քայլերի, միշտ հանդիպում են որոշակի ձախողման: Քաղաքականությունը դառնում է «խաղ» հնարավորի ու անհնարինի, ռացիոնալի ու իռացիոնալի միջև:

Բարոյականն ու բարոյականությունն էլ, իրենց հերթին, «ներխուժում են» իռացիոնալ տարրերների աշխարհ և փորձում կարգ ու հաջորդականություն հաստատել այնտեղ: Այդ իսկ պատճառով բարոյական արժեք-



ները և, մասնավորապես, «արդարությունը», նրա շուրջ ձևավորված մոտեցումներն ու ընթացումները պարզապես հերթական առասպել անվանելը բավական չէ: Իրականում, գործառական առումով այն մուտք է գործում քաղաքական դիսկուրս նախ ռացիոնալացնելու վերոնշյալը, բայց նաև ներկայացնելու, մեկնաբանելու ու կազմակերպելու սոցիալական իրականության այն կողմերն ու իրողությունները, որոնք անմիջականորեն վերաբերում են մարդկային համակեցությանը, փոխգործակցության ու համագործակցության բացակայությանը և կապված են մարդկային պահանջ-մունքների, ձգտումների ու որոնումների հետ: Իհարկե, կարելի է անվերջ վիճել այն հարցի շուրջ, թե արդյոք արդարության գաղափարը հերթական ինչ-որ խմբի քողարկված շահերով պայմանավորված պարտադրանք չէ: Գուցե այս հարցին կարելի է դրական պատասխանել, եթե խոսքը որոշակի ընթացման մասին է: Սակայն այլ հարց է փորձ անել արդարության գաղափարը նախ և առաջ դիտելու իբրև հնարավորություն, միտում, կաղապար, ինչում որոշակի «միս ու արյուն» է ստանում մարդկայինը:

Արդարությունն ու նրա սոցիալական անհրաժեշտության գիտակցումը մի ամբողջ գործընթաց են, որոնցում կարող են ներառված լինել անենատարբեր սոցիալական խմբեր՝ սոցիալ-տնտեսական ու կրթական անենատարբեր ցեղով, բայց ունակ մասնակից լինելու հասարակության մեջ ծավալվող քաղաքական գործընթացներին: Քաղաքական գործընթացները դառնում են արդարության, իբրև արժեքի, բյուրեղացման նախապայմանը, ապա նաև դրվում լայն շրջանառության: Պատահական չէ, որ չկա քաղաքական մի գործընթաց, իրադարձություն, որում «արդարության ոտնահարման» հանգամանքը չդառնա կոնֆլիկտային փոխազդեցությունների ծավալման պատճառ: Եվ հակառակը՝ «արդարության վերականգնումը» կոնֆլիկտային փոխազդեցություններում լարվածության թուլացման ու մեղմացման կարևոր գրավականներից մեկն է:

Այսպիսով, սոցիալական իրականության շուրջ քաղաքական դիսկուրսում արդարությունը ներառվում է լուծելու համար թե՛ տեսական, թե՛ պրակտիկ կարևորագույն խնդիրներ:

Պետք է նշել, որ այն ավանդաբար ներկայանում է այլ գաղափարների հետ կապակցված, որոնց թվում կարևորագույն տեղ է զբաղեցնում *բարձրագույն բարիքի* գաղափարը: Այսինքն՝ արդարության գաղափարը սերտորեն կապված է բարիք հասկացության հետ՝ ոչ միայն կոնկրետ բարիքների բաշխման առնչությամբ, որոնք ավելի հաճախ միջոցներ են և ոչ թե նպատակներ, այլև բարձրագույն բարիքին հասնելու իմաստով:

Ի՞նչ է բարձրագույն բարիքը: Այս դեպքում այն սահմանային հասկացություն է, որն արտահայտում է նպատակների նպատակը, միաժամանակ ուղղակիորեն մղում է դեպի բարոյական վարքն ու իրավիճակի կապակցությամբ՝ բարոյական բավարարվածությունը: Այսինքն՝ այստեղ ձևավորվում է մի ինքնատիպ եռանդամ, որն ունի մոտավորապես հետևյալ դասավորվածությունը.

Բարիք → Բարոյական բավարարվածություն → Արդարություն

Եթե մանրամասնելու լինենք, ապա արդարությունը անձնական առումով ենթադրում է.

- **բարոյահոգեբանական տեսանկյունից.** բավարարվածություն տիրող հարաբերություններից, սոցիալական հաստատություններից,

- **սոցիալ-քաղաքական առումով.** մասնակցություն, հետևաբար ներառման ու ազդեցության հնարավորության իրականացում, այսինքն՝ սուբյեկտ լինելու ու ակտիվ լինելու կարողության իրացում:

Բարիքի գաղափարը ոչ միայն իմաստավորվել է իբրև բարձրագույն, նյութական կամ հոգևոր, այլ նաև դիտարկվել է իր անձնական ու հանրային ձևերի տեսանկյունից: Իրականում բարիքի այս բոլոր ըմբռնումները սերտորեն փոխկապակցված են: Բարձրագույն բարիքն այն է, ինչին ձգտում է յուրաքանչյուրն իբրև անձ և սոցիալական համակեցության անդամ: Այն ավելի հաճախ նույնացվում է երջանկության ու բարօրության հետ: Ընդ որում՝ անտիկ պատկերացմամբ բարձրագույն բարիքին կարելի է հասնել միայն հանրույթի մեջ և օժանդակելով հանրային բարիքին: Հետևաբար, բարձրագույն բարիքը, իբրև անձնային բարիքի իրականացում, հնարավոր է միայն հանրային բարիքի շնորհիվ:

Հայտնի է, որ քաղաքական ամենաթեժ քննարկումներից մեկն այն է, թե ինչպես են հարաբերվում հանրային ու անձնական բարիքները: Այս հարցի պատասխանից է կախված արդարության բուն գաղափարի բովանդակային ծանրաբեռնվածությունը: Եթե հիշելու լինենք քաղաքական գաղափարախոսությունները, ապա նրանք փորձում են հիմնավորել որևէ մեկի գերակայությունը կամ՝ կարելի է ներդաշնակեցնել անձնային ու հանրային բարիքները: Քաղաքական կուսակցությունները փորձում են համոզել, որ իրենց մոտեցումն ու ծրագրերը լավագույնս են ներդաշնակեցնում դրանց միջև հարաբերություններն ու ապահովում արդարության հաստատումը:

Այսպիսով, քաղաքականությունը, իբրև հանրային երևույթ, լավագույն բեմահարթակն է, որտեղ հանրային բարիքի քննարկումներին մասնակցությունը պետք է որ հասանելի լինի բոլորին: Եթե հանրային ու անձնային բարիքների, նրանց փոխհարաբերության հարցը քննարկում է բարոյագիտությունը, ապա դրանում մասնակցության իրավունք ունի միայն որոշ մասը՝ ըստ մասնագիտական կարողությունների: Այս առումով քաղաքական հարթակը շատ ավելի ժողովրդավարական է և, կարծես թե, նման մասնագիտական սահմանափակումներ չի դնում մասնակիցների առջև: Հետևաբար, կարելի է ձևակերպել ևս երկու դրույթ:

*Արդարության հաստատումը հանգեցնում է բարիքի իրականացմանն ու ձեռքբերմանը թե՛ իր անձնային, թե՛ իր հանրային առումներով:*

*Արդարությունը ներդաշնակեցնում է անձնային ու հասարակական բարիքները:*

Այսպիսով, արդարության գաղափարի և սոցիալական իրականության քաղաքական կառուցակցման մեջ նրա դերի ու տեղի հիմնահարցը ցույց է տալիս, որ այն մի կոնցեպտ է, որը տեսական ու գործնական առումով հնարավորություն է ընձեռնում կարգավորելու և իմաստ հաղորդելու «մարդ-սոցիալական համակեցություն» բարդ փոխհարաբերություններին:

**НАИРА МКРТЧЯН – *Идея справедливости в контексте политического конструирования социальной реальности.*** – В статье анализируется роль справедливости в политическом дискурсе социальной реальности. Эта роль напрямую связана с соотношением морали и политики, а также с идеей блага – не только с распределением материальных благ между членами общества, но и высшего блага, личного и общественного. Справедливость – комплексное понятие, которое обусловлено качеством социальных институтов и исторически воспринималось как добродетель. С морально-психологической точки зрения она предполагает удовлетворенность существующими социальными отношениями и институтами, а с социально-политической – участие субъекта в общественной жизни и возможность реализовать свое мнение по актуальным вопросам.

**NAIRA MKRTCHYAN – *The Idea of Justice in the Context of Political Construction of Social Reality.*** – The role of justice in the political discourse on social reality is analyzed in the article. Its connection to the problem of the relationship between morality and politics is justified. Justice is a complex notion, which has been historically grasped as the virtue, merit of social institutions. It is directly connected to the idea of good not only from the aspect of the distribution of concrete goods among the members of society, but from the aspect of its connection to ideas of the chief good, personal good and public good. From moral-psychological point of view justice presupposes the satisfaction with the actual social relations and institutions, from socio-political point of view – the participation, involvement of the subject and the possibility of realization of influence in social relations.